ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.07.2023թ. N 220/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.07.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Աբրահամյանը, Ս.Դանիելյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Իսկանդարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ն (ք.Երևան, Կոմիտասի-59/9)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Նախահաշվային ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ	Մագնիսական քարտեր կարդացող սարքեր	6 120 000	0%	6 120 000	**6 144 000**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան, իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Հաշվի առնելով, որ «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

1. «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Սմարթ Սիքյուրիթի Սիսթեմս» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյան

Անդամներ՝ Ա.Աբրահամյան

Ս.Դանիելյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան